



ՄԱՍՈՒԼԻ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Երևան, 28 փետրվարի, 2019թ.

Հայաստան. Ապահովել Բնակչության պաշտպանության Կամավորականության հուսալի մեխանիզմ

PPRD East 2 Հայաստանի Ազգային խորհրդատվական խմբի եզրափակիչ հանդիպումը տեղի ունեցավ 2019թ. փետրվարի 27-28-ին Երևանում՝ Ծրագրի իրականացման 4 ու կես տարվա ընթացքում երկրի ձեռքբերումները ներկայացնելու նպատակով: Կարևոր հաջողությունների թվում Հայաստանը կարող է նշել Բնակչության պաշտպանության Կամավորականության ուժեղ մեխանիզմ ապահովելու ջանքերը, որը հանգեցրել է «Կամավորական գործունեության մասին» օրենքի ընդունմանը, մինչդեռ մշակվում է Բնակչության պաշտպանության կամավորության վերաբերյալ օրենսդրությունը:

Հայաստանի համար Բնակչության պաշտպանության Կամավորականության կազմակերպումը աղետների ռիսկերի կառավարման ազգային համակարգի կարևորագույն մասն է հանդիսանում: «Քանի որ բնակչությունը միշտ էլ ազդակիր տարածքում առաջին արձագանքողն է աղետի արձագանքման արդյունավետությունը կախված է նաև կամավորների համար նախատեսված ծրագրերից և համակարգման կառույցներից», - բացատրեց Արտակարգ իրավիճակների նախարարության Փրկարարական ծառայության տնօրենի տեղակալ և PPRD East 2 Ղեկավար կոմիտեի անդամ, պարոն Արտավազ Դավթյանը: «Եվրոպայում մեր գործընկերների հետ գաղափարների և փորձի փոխանակման հնարավորությունը մեր երկրին հնարավորություն տվեց ամրապնդելու բնակչության պաշտպանության կամավորականության օրենսդրությունը և, այդպիսով, բարելավել մեր պատրաստվածությունը», - ավելացրեց պարոն Դավթյանը:

Հայաստանն ավանդաբար բարձր զգոնություն է ցուցաբերում, երբ խոսքը գնում է պատրաստվածության մասին: 2018թ. նոյեմբերին արտակարգ իրավիճակում օգնության միջազգային համակարգման թեմայով ազգային սեմինար կազմակերպելով և ավելին, այդ առարկան ներառելով ՀՀ Բնակչության պաշտպանության ակադեմիայի ուսումնական ծրագրում, Հայաստանը կլինի վեց Արևելյան գործընկերության երկրներից առաջինը, որը հետաժողով կլինի առաջին տարածաշրջանային լայնամասշտաբ EU MOLDEX 2017 դաշտային վարժանքից հետո տեղի ունեցած քաղված դասերի գործընթացի արդյունքում ձևավորված առաջարկություններին:

Փաստերի և թվերի առումով, Հայաստանը հանձնառու է եղել Ծրագրի կողմից առաջարկված բոլոր միջոցառումներին՝ մասնակցելով 41 միջոցառումների (35 տարածաշրջանային և 6 ազգային), ընդհանուր թվով 297 մասնակիցներով (204 Արտակարգ իրավիճակների նախարարությունից և 93՝ Աղետների ռիսկերի կառավարման ազգային այլ շահագրգիռ կողմեր): Նշանակվել են բոլոր թեմատիկ պատասխանատուները, և հիմնվել են Հեղեղումների ռիսկի կառավարման, Աղետների ռիսկի գնահատման, Աղետների հետևանքով կորուստների սվյալների և Ընդունող երկրի աջակցության ուղղությամբ միջգերատեսչական աշխատանքային խմբերը:

Ընդունող երկրի աջակցության (HNS) կանոնակարգը, որը կհամապատասխանի ԵՄ HNS ուղեցույցին, այժմ վերջնական փուլում է՝ Կառավարության որոշումների հետ կապված: Բնակչության պաշտպանության և Արտակարգ իրավիճակում Աղետների կառավարման ընթացակարգերը, ինչպես նաև Ստանդարտ գործառնական ընթացակարգերը հաստատման ընթացքում են:

Ընդհանուր տեղեկություններ

ԵՄ կողմից ֆինանսավորվող «Տարերային և տեխնաժին աղետների կանխարգելումը, պատրաստվածությունը և արձագանքումն Արևելյան գործընկերության երկրներում» (PPRD East 2) Ծրագրի նպատակն է՝ նպաստել Արևելյան գործընկեր երկրների խաղաղությանը, կայունությանը, անվտանգությանը և բարգավաճմանը: Այն նաև միտված է պաշտպանելու տարածաշրջանի շրջակա միջավայրը, բնակչությունը, մշակութային ժառանգությունը, ռեսուրսները և ենթակառուցվածքները՝ ամրապնդելով երկրների դիմակայելու ճկունությունը, պատրաստվածությունը և արձագանքումը տեխնաժին աղետների և տարերային վտանգների հետևանքով առաջացած աղետների նկատմամբ:

Ներկայումս, իր 2րդ փուլում՝ PPRD East 2 Ծրագիրը նպաստում է աղետների ռիսկի կառավարման կարողությունների զարգացմանը ազգային մակարդակով **Հայաստանում, Ադրբեջանում, Բելառուսում, Վրաստանում, Մոլդովայում և Ուկրաինայում**, ամրապնդում է տարածաշրջանային համագործակցությունը Գործընկեր երկրների միջև, և Գործընկեր երկրներին աստիճանաբար ավելի մոտեցնում է ԵՄ Բնակչության պաշտպանության մեխանիզմին: Ծրագրի 2րդ փուլն ընթանում է 2014 թ-ից մինչև 2019թ., € 5.5 միլիոն բյուջեով:

Լրացուցիչ տեղեկություններին կարող եք ծանոթանալ հետևյալ հղումով՝ www.pprdeast2.eu



Սույն Ծրագիրը ֆինանսավորվում է Եվրոպական Միության կողմից

Ծրագիրն իրականացվում է Ուկրաինայում գտնվող իր տարածաշրջանային գրասենյակից՝ Stantec-ի գլխավորած կոնսորցիումի կողմից.
Սկադնիկի Բոգոմոլցի փող. 7/14
գրասենյակ 101
01024 Կիև, Ուկրաինա
Հեռ՝ +38 044 25 32 343
Ֆաքս՝ +38 044 25 30 847

Եվրոպական հանձնաժողովը ԵՄ-ն գործադիր մարմինն է:

«Եվրոպական միությունը բաղկացած է 28 երկրներից և այդ երկրների ժողովուրդներից: Այն հանդիսանում է մարդկային արժանապատվության, ազատության, հավասարության, օրենքի գերակայության և մարդու իրավունքների նկատմամբ հարգանքի արժեքների վրա հիմնված եզակի քաղաքական և տնտեսական գործընկերություն: Հիսունից ավել տարիների ընթացքում մենք ստեղծել ենք խաղաղության, ժողովրդավարության, կայունության և բարգավաճման գոտի մեր մայրցամաքում պահպանելով մշակութային բազմազանությունը, հանդուրժողականությունը և անհատական ազատությունները: Եվրամիությունը ձգտում է կիսել իր արժեքներն ու ձեռքբերումները հարևան երկրների և ժողովուրդների հետ, ինչպես նաև, ավելի լայն շրջանակով»: